

106.0295.240108

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
„24,, 01 2008 Թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 10608031

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

21 դեկտեմբերի 2007 թվականի N 295-Ն

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 14-ի "Բույսերի պաշտպանության քիմիական եւ կենսաբանական միջոցների արտադրության եւ (կամ) վաճառքի լիցենզավորման կարգը եւ լիցենզիայի ձեւը հաստատելու մասին" N 1902-Ն եւ 2007 թվականի հունվարի 11-ի "Անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման լիցենզավորման կարգը եւ լիցենզիայի ձեւը հաստատելու մասին" N 126-Ն որոշումների 2-րդ կետերի դրույթները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) բույսերի պաշտպանության քիմիական եւ կենսաբանական միջոցների արտադրության եւ (կամ) վաճառքի համար լիցենզիա ստացած իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզավորող մարմին ներկայացվող հաշվետվության ձեւը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման լիցենզիա ստացած իրավաբանական, ֆիզիկական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզավորող մարմին ներկայացվող հաշվետվության ձեւը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Ձեւ

Հավելված N 1
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2007 թվականի դեկտեմբերի 21-ի
N 295-Ն հրամանի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Բույսերի պաշտպանության քիմիական եւ կենսաբանական միջոցների արտադրության եւ (կամ) վաճառքի համար լիցենզիա ստացած իրավաբանական անձի

անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը.

2. Լիցենզիայի համարը եւ երբ է այն տրված. -----

3. Լիցենզիայի գործողության վայրը. -----

4. Մասնագիտական որակավորում ունեցող մասնագետի անունը, ազգանունը (ինչպես

նաեւ տեղեկատվություն մասնագետի փոփոխության դեպքում).

5. Արտադրվող եւ (կամ) վաճառվող բույսերի պաշտպանության քիմիական եւ կենսաբանական միջոցների անվանացանկը.

6. Ժամկետանց բույսերի պաշտպանության քիմիական եւ կենսաբանական միջոցների

անվանումը, քանակը, պահպանման վայրը.

7. Տեղեկություններ իրավասու մարմինների կողմից հայտնաբերված խախտումների

մասին.

Լիցենզավորված մարմնի ղեկավար՝ -----

(ստորագրություն)

"---" ----- 200--թ.

Կ.Տ.

Ձեւ

Հավելված N 2
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2007 թվականի դեկտեմբերի 21-ի
N 295-Ն հրամանի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման համար
լիցենզիա
ստացած իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը,
ազգանունը.

2. Լիցենզիայի համարը եւ երբ է այն տրված. -----

3. Լիցենզիայի գործողության վայրը. -----

4. Մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների անունը, ազգանունը
(ինչպես նաեւ տեղեկատվություն մասնագետի փոփոխության դեպքում).

5. Անասնաբուժասանիտարական փորձաքննության գործունեության տեսակը.

6. Տեղեկություններ իրավասու մարմինների կողմից հայտնաբերված
խախտումների
մասին.

Լիցենզավորված մարմնի ղեկավար՝ -----
(ստորագրություն)

"-----" ----- 200--թ.

Կ.Տ.

